

առաջնորդարան եւ կալուած՝ զմեծ մենաստանն Դրագարկու. զի ամօք յառաջ վախճանեալ էր տէր նորին եւ հին տէրն Լամբրունի՝ Հեթումն-Հեղի: Այլ զի եւ ինքն Յովհաննէս ոչ քան զմի ամ յերկարեաց զկեանսն յետ Լեւոնի՝ յարքեպիսկոպոսն Ստյ երեւի վերադարձեալ մեծի վանացն, եւ նորոյ կաթողիկոսին Ա Կոստանդեայ դարձ արարեալ՝ ի Հռոմկլայն: Սակայն յայսմ պահու՝ յորում ամենայն ինչ մերձ էր՝ իսպառել վասն Լեւոնի, տակաւին դողդոջուն անձամբ, այլ անընդոստ սրտիւ՝ ունէր եւ վստահանայր պահել անհուպ յօտարին բռնութենէ՝ եւ զայնքան հեռաւոր բերդ, իբրեւ զմի յիւրոցն մերձաւորաց:

Բայց ազդողագոյն եւ յետին ցոյցք յեղյեղուկ բաղդին՝ եղեւ այն, վասն որոյ յերկարագոյնս աշխատ եղեալ էր Լեւոն՝ ի կեանս իւր, եւ որով ծանօթագոյն եղեւ համբաւ նորա առ արեւմտեայս. խէթ եւ խութն այն Անտիոքայ, որ իբրեւ յալիս հանդարտեալս ծածկեալ էր յերից ամաց հետէ եւ իսպառ հետախաղաղ կարծիւր, յանկարծոյն եւ՝ ի տարաժամու՝ միանգամ եւս եւ յետին անգամ՝ ի վեր երեւեցաւ, եւ այլ ոչ եւս կրկնեաց: Մի ոմն յիշխանաց եւ պաշտօնէից Անտիոքայ կամ Տրիպօլեայ, Գուլիելմ Ֆարապէլ մականունն, ի Բիւյի (Puy) զարմէ Փռանկաց, որոյ նախահարք ընդ առաջին Խաչակրաց եկեալ էին, եւ յարեալ՝ ի տեարս Տրիպօլսոյ՝ իբրեւ լիճ պարոնայք, եւ շատք զսպարապետութեան պաշտօն վարէին, որպէս եւ սա թուի, գաղտ եղ բանս ընդ կոմսին Պեմունդի, եւ մատնեաց՝ ի ձեռս նորա զԱնտիոք, անպատրաստ գտեալ զՌովբէն: Չեն ծանօթ մանր հանգամանք իրացն, այլ զլուիս եւ աւարտ գործոյն եղեւ՝ իբաց մերժումն Ռուբինի՝ ի գահէն եւ՝ ի քաղաքէն. թերեւս ինքնին իսկ աճապարեալ հեռացեալ անտի՝ փութացաւ անկանել՝ ի գիրկս հաւուն իւրոյ Լեւոնի, եւ հուսկ անգամ խնդրել զհօր օգնականութիւն նորա. ժպրհեալ, որպէս ասեն ամենայն յիշողք իրացս, իմոռացօնս արկանել զանարգանսն՝ զոր արարեալ էր այնքանոյ բարերարի իւրոյ եւ խնամողի, որոյ երախտիք առաւել էին քան զմարմնաւոր ծնողաց: Այլ անագան յոյժ եւ վայրապար բաղիւտ գդուռն՝ որ ոչ եւս էր նմա բանալոց: Ոչ միայն անձամբ օգնել չկարէր այնուհետեւ Լեւոն՝ հիւանդագին եւ մերձեցեալ յելս իւր, այլ եւ ոչ՝ ի ձեռն իւրայոցն կամեցաւ: Երիտասարդն ապերախտ եւ տարաբաղդ՝ յայտ է թէ իւրով անզգուշութեամբ վրիպեալ էր զայս նուագ. եւ զի արդէն՝ ի չափ հասեալ էր (զովով իբր ամաց 22 կամ սուղ աւելի), ինքեան մնայր հնարս գտանել՝ ճարտարութեամբ կամ քաջութեամբ, զորոց բազում